

déjà fait descendre un siècle plus bas, et rien n'est survenu qui soit de nature à modifier les résultats précédemment obtenus. Nous ne voulons donc demander à la présente étude qu'une confirmation de ces résultats. L'impossibilité de placer la composition de l'Histoire d'Arménie à la fin du V^e ou au commencement du VI^e siècle est désormais positivement établie; et si la date traditionnelle ne peut plus être défendue, nous ne voyons aucune raison vraiment scientifique qui nous empêche de l'abaisser jusqu'au VIII^e siècle.

Paris, 31 décembre 1893.

A. Carrière.

Փարիզ, 31 Դեկտեմբեր 1893:

Ա. ԳԱՐՐԻԵՐ

ՄԱՅԻՆ

Մայիս:

Երբ ոգը շատ արագ շարժման մէջ է, կամ մարմնոց ընդհարելով զանոնք կը ձօժացնեն եւ ինքն ալ կը ձօժայ, հնչիւն մը յառաջ կու գայ: Արծոց որսանցքին մէջ կազմուող այսպիսի հնչիւն մը՝ յօն կը կուտի: Դնդիր է թէ որսանցքին մէջ ինչպէս կը կազմուի ձայնը: — Ցետննք համառօտիւ: — Երբ շունչ կ'առնունք՝ ոգը շնչափողերու ձեռք թօքերուն կը հասնի եւ թօքերը կը լեցնեն: Խոշափողը կը դառնայ չորս օղակներէ, (չ. օ. օղակոճիկ, վահանակոճիկ եւ կտակոճիկ՝ որ կրկին է) եւ երկու առաջգական ձայնակապերէ կը բաղկանայ, որոնց մէջտեղն է յօնաւորը: Արտաշնչութեան ժամանակ ոգը թօքերէն դուրս հոսելով՝ ձայնաւորն սեղմուելով կ'անցնի եւ ձայնակապերուն կ'ընդհարի եւ ասով ոգն ոչ թէ միայն ձայնակապերը կը ձօժացնեն, այլ եւ ինքն իսկ կը ձօժայ: Այս ձօժումը հնչիւն յառաջ կը բերէ, զոր յօն կը կուռնք: Եթէ կենդանի անասնոց մը խոշափողէն վար՝ շնչափողն պնդէս մը Ծակնք որ ոգը խոշափողին չհասած ելլել կարենայ, չի կրնար ձայն յառաջ գալ: Իսկ եթէ միեւնոյն եղանակաւ խոշափողէն վեր՝ շնչափողը Ծակնք, թէեւ ձայնը կը փոխուի եւ կը տկարանայ, բայց կ'երևէ: Ուրեմն ասկէ կը հետեւի որ ձայնակապերն իրենց ձօժարովը ձայնը կը կազմեն եւ կ'որոշեն: Բայց որպէս զի դուրս ելլող ոգը ձայնակապերը ձօժացնել կարենայ, պէտք է որ ասոնք իրարու մօտ ըլլան: Ուրեմն ձայնաւորն անդ պէտք է ըլլալ: Եթէ շատ բացուի, կար-

գաւորեալ ձայն չ'եղեր, եւ ոգը չ'ընդլ կամ առանց հնչման դուրս կ'երէ: Այսպէս ահաւորիկ ձայն իւր Ծագումը խոշափողին մէջ կ'առնու: Բայց ձայնը կը կատարելագործուի կոկորդի, բերնի եւ անգայ խոռոչներուն մէջ, որ այս պատճառաւ ալ ձայնափող կը կոչուին: Ձայնի զօրութիւնը կամ հնչիւնը թօքերու եւ խոշափողի մեծութենէն, շնչաւորութեան սաստկութենէն կախուած ունի: Արշափ թօքերն ու խոշափողը զօրաւոր, եւ բերնի ու անգայ խոռոչը լայն է, եւ խոշափողին վրայ քիչ շողք կը գտնուի, այնպիսի զօրաւոր կ'ըլլայ ձայնը: Ձայնի հնչականութիւնը խոշափողի խոռոչներէն, ձայնակապերու որպիսութենէն, ձայնափողի մեծութենէն ու ձեւէն, ինչպէս նաեւ աստմանց շարքէն, ձայնափողի ձգտողականութենէն ու խոռոչութեան աստիճանէն կը կախուի: Այս կետերու պէտքսութեան համեմատ՝ ձայնը խիստ կամ մեղմ, անոյշ կամ խայթող, յստակ կամ խղճուկ, անհնչական կամ հնչական կ'ըլլայ: Ապա ուրեմն երգչիք ասոր շատ մօտադիր ըլլալու եւ հոգ տանելու են. որովհետեւ այս յատկութիւնք բաւ մեծի մասին շարունակելու կրթութեամբ կրնան ստացուիլ: Ձայններու բարձրութիւնն ու ցածութիւնը գլխաւորաբար ձայնակապերու ձգտմանէ կախուած ունի: Ինչպէս որ ջութի միջի հաւասար տառիճանաւ պրկեալ կարճ աղիք մը՝ երկայն աղիքէն աւելի բարձր ձայն կը հանէ, նմանապէս կարճ ձայնակապերն աւելի բարձր ձայն յառաջ կը բերեն: Եւ որովհետեւ տղոց եւ կանանց ձայնակապերն

աւելի կարճ են քան թէ արանց, անոր համար անոնց ձայնը՝ ինչպէս արդէն ծանօթ է, աւելի բարձր է այրական ձայնէն, որ գրեթէ ութեակ մը ձայնաստիճան (Octave) աւելի ցած է կանանց ձայնէն: Երգելու ժամանակ ձայնը բարձրացընելն ու ցածցընելն աւելի արտաշնչեալ ոգոյ սաստիկութենէն քան թէ ձայնակապելու ընդլայմանէ կամ անձկանալէ կ'ըլլայ: Ցած ձայները ոգոյ մեծ քանակութիւն կը պահանջեն, անոր համար ալ աւելի լայն թոր է եւ ընդարձակ ոդանցը կ'ենթադրեն: Բարձր ձայն առնուած միջոցին՝ խռչափողը վեր կ'իջէ, որով շնչափողը կ'երկնայ եւ կ'անձկանայ, եւ ոգը սաստիկ զօրութեամբ դուրս չի կրնար ելլել: Գեղեցիկ ձայնի մը սովորական տարածութիւնը 2 միւսէն 2½ ութեակ (16—20 ձայնաստիճան) է, եւ եթէ մէկուն ձայնի գործարանն շատ լաւ է, նոյնպիսին շարունակեալ կրթութեամբ 3, միւսէն անգամ 3½ ութեակ (24, միւսէն 28 ձայնաստիճանի) կրնայ ձայնը բարձրացընել:



ՔԱՂԱՔԱՔԱՔԱՔԱ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Վիեննա, 30 Յունուար 1894:

Գրեթէ չորս տարի էր որ այժմու Գերմանիոյ գլխաւոր հիմնադիրներէն մին՝ իշխան Պիզմարը՝ իւր պաշտօնէն հրաժարած կամ՝ հրաժարիլ ստիպուած էր: Այն ժամանակէն ի վեր խուլ հակառակութիւն մը կար իրեն եւ իւր կողմակցաց եւ նոր վարչութեան եւ անոր քաղաքական ընթացքին մէջ, եւ շատ անհաճոյ միջադէպերու առիթ տրուեցաւ: Այժմ՝ կարելի եղաւ վերջնական հաշտութիւն ընել երկու կողմանց: Արդէն քիչ ժամանակ յառաջ կայսրն իւր կողմանէ քայլ մ'առած էր այս նկատմամբ. մօտ օրերս խաւրելով իշխանին շիշ մը հնազոյն գինի իւր ընծայ՝ իշխանը շնորհակալ եղաւ եւ խոստացաւ անձամբ ալ կայսրը ներկայանալ: Ինչպէս այցելութեան ժամանակ, որ ամսոյս 26ին պատահեցաւ, իշխանն այնպիսի պատիւներով ընդունուեցաւ, որ միայն վեհապետաց կը ցուցուին սովորաբար:

Գերմանիոյ մէջ խնդրոյ նիւթ է դրամական նոր օրինագիծն՝ որուն նպատակն է անցեալ տարւոյ զինուորական նոր օրէնքին համար պէտք եղած ահագին գումարները հայթայթել: Ճակատին տարակուսական է որ ընդունուի օրինագիծը:

Գաղղիոյ Երեսփոխանաց ժողովրդին վերջին ծանօթ դէպքէն ի վեր խոստութեամբ սկսաւ վարուիլ վարչութիւնը անիշխանականաց հետ, եւ ամսոյս սկիզբն ըլլոր երկրին մէջ քաղմութիւն հետագոստութիւնը կատարուեցան եւ անիշխանականաց շատ մը զաղտնիք յերեւան ելան, ըայց նաեւ ժողովրդեան շատ մեծ մասին խեղճութիւնը, որոնց քովալ քննութիւններ եղան՝ շփոթմամբ անիշխանական կարծուելով: Այս մասին արդարացի տրտուեցներ եղան այս վարմանց դէմ: Անիշխանականը այս օրերս ուզեցին երեսփոխանաց ժողովրդին մէջ վարչութեան դէմ ցոյց մ'ընել, ըայց յաջողութիւն չունեցան:

Միւս կողմանէ՝ Բլէմանտոյ սկսած է նաւատորմի վարչութեան մէջ գործուած շատ մը զեղծմունք յերեւան հանել, որոնք անշուշտ մեծ աղմուկ պիտի յարուցանեն:



ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

ՈՒՍՈՒՄԵՆՆԵՐ

ԲԱՆԱՄԻՐԱՆՆԵՐ — Թղթակցութիւն. 33:

ՊԱՏՄԱՎԱՆ — Հունգարահայոց մայրաքաղաք (Կեղւոս հայաքաղաքն) ի գեր եւ ի պատկերս. 36:

ՄԱՏՆԱՆՈՍՈՍԱՆՆԵՐ — Կիսն իրքեւ ամուսին. 41:

ԼԵՋՈՒՄԱՐԱՆՆԵՐ — Յունական փոխառեալ քառեր հայերէնին մէջ. 47:

ԳՐԱՎԱՆ — Յուցակ հայերէն ժողազարց Ս. Կարապետի վանաց Փնուղի. 49:

ԹՂԱՅՈՒՆԹԻՒՆ — Նորագոյն աղբքը Մ. Խորենացոյ. 53:

ՏԵՆԻՍԵԼԷ

2այր. 67:

ԳՐԱՅՈՒՆՆԵՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ. 68:



ՀԱՐԱՏԱՐԱՆԻՉ ԾԻ ՊԱՏՄԱՆԱՆԱՆՈՒ ԽՄԱՐԱՆԻՐ

Կ. ՌԱՓԱՅԷԼ Կ. ՊԱՐՈՆՉ

Վ Ի Ե Ն Ե Ն. Մ Ե Ի Բ Ե Ր Ե Ն. Ց Գ Մ Ե Ն